




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2454

ՊՐԱԼԵՏԱՐԻԱՏ ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱԳԵՐ.

3
2

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

ՊՐԱԼԵՏԱՐԻԱՏ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ

300

1959-91

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

9(47)

9-64

24 JAN 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարները բոլոր յերկրների, միացե՛ք!

30 MAY 2011

300

1259-21 Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ



1003
(71696)

ԻՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ

„ՅԵՐԵՍԸ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ“ ԼՈՋՈՒՆԳԸ

Թարգմ. Վ. ՌՇՏՈՒՆԻ



300

1737

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — № 219.

ՅԵՐԵՎԱՆ — 1925.

2459.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ԻՆԶ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ

«ՅԵՐԵՍԸ ԴԵՊՒ ԴՅՈՒՂ» ԼՈՁՈՒՆԴԸ.

ՍՆԼՈՐ չափերով մոռացուրյան մասնված, բա-
ժան-բաժան յեղած, տրուված, բոլոր ամենաառաջվոր
յերկրներում կյանքի կիսաբարբարոս պայմանների
դասապարսված գյուղական ազգաբնակչությունը
ենեսապես, սոցիալապես, կուլտուրապես շահագր-
գրված լինելով սոցիալիզմի հաղթանակով, բնգու-
նակ Ե վնականապես պաշտպանելու հեղափոխա-
կան պրոլետարիատին միայն նրանից հետո, յերբ նա
նվաճած կլինի ֆաղափական իշխանությունը, միայն
նրանից հետո, յերբ նա խոսուր հողատերերի յեվ կա-
պիտալիստների գաղթ վնականապես տեսած կլինի,
միայն նրանից հետո, յերբ այդ նվաճած մարդիկ
գործնականում կենսեն, վոր ունեն կազմակերպված
առաջնորդ յեվ պաշտպան, վորը բավականաչափ հզոր
ու կորովի յե ոգնություն ու ղեկավարություն յեվ
ուղիղ ճանապարհի ցույց տալու համար:

Ն. ԼԵՆԻՆ



7904-88

Ցիքաժ 5000

Պետրատի առաջին տպարան վաղարշապատում.

1. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Լենինի դմի ամենաբնորոշ և դրա հետ միասին ամենաուժեղ կողմերից մեկն ել այն է, վոր Ը. Լենինը, ավելի քան վորևե մեկը, կարողանում եր դասակարգերի փոխհարաբերությունները դիտել նրանց դի-նամիկայի (շարժման) մեջ: Պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերության հարցն, որինակ, Լենինի դմը յերբեք չի քննում իբրև միանգամ ընդ-միշտ տվյալ, բարացած փոխհարաբերություն: Հիմ-նական զանազանությունը, վոր դնում է Լենինի դմն, այս է՝ գյուղացիության վերաբերմունքը դեպի պրոլետարիատը մինչեվ բանվոր դասակարգի կողմից իշխանություն նվաճումը և գյուղացիության վերա-բերմունքը դեպի պրոլետարիատը բանվոր դասակար-գի կողմից իշխանության նվաճումից հետո: Ընկեր Լենինն այս չափանիշով և մոտենում նաև մի ամբողջ շարք այլ արմատական խնդիրներին լուծմանը: Այս իմաստով Լենինի դմն ամբողջովին դինամիկ է:

Բանվոր դասակարգի կոմունիստական ավան-գարդը պայքարում է սոցիալ-դեմոկրատիայի դեմ (բան-վորական արիստոկրատիայի, մանր-բուրժուական ու-ղեկիցների դեմ) հանուն բանվոր դասակարգի: Բանվոր դասակարգը գլուխ ունենալով կոմունիստական կու-սակցությունը, պայքարում է բուրժուազիայի դեմ հա-նուն գյուղացիության: Բայլեի դմի ամբողջ աշխա-

տանքը, նույնիսկ միջազգային մասշտաբով, կարելի չէ, վորոշ իմաստով, այս յերկու խնդիրը համարել: Բայց այլ բան է կուսակցական բանվորական մասսայի հա-մար պայքար մղել մինչեվ պրոլետարիատի կողմից իշխանություն նվաճումն ու այլ բան՝ իշխանությունը նվաճելուց հետո: Այս նույնքան վերաբերում է նաև գյուղացիությանը: Այլ բան է իմպերիալիստական բուրժուազիայի դեմ պայքարել հանուն գյուղացիու-թյան մինչեվ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը, ու այլ բան՝ այդ իշխանու-թյան նվաճումից հետո:

Գյուղություն ունի մի խիստ կարևոր փաստաթուղթ, վորի մեջ ամենախտացած, ամենապարզ ձևով մեկնա-բանված է Լենինի դմի հայացքը պրոլետարիատի դեպի գյուղացիություն ունեցած վերաբերմունքի մասին: Այդ փաստաթուղթը բայլեի դմի ամենաբարձր կետն է պրոլետարիատի և գյուղացիության հարցի մասին: Մեր կարծիքով դա բայլեի դմի ամենանշանավոր փաստա-թուղթն է: Վորովհետև այդ փաստաթուղթը նախ փոր-ձում է բայլեի դմի գյուղացիության մասին ունեցած հայացքը միջազգայնացնել, այսինքն մի բանաձև տալ, վոր պետքական լինի վոչ միայն ուսումնական բայլեի դմի, այլև միջազգային բայլեի դմի համար, (մենք խոսում ենք գյուղացիական հարցի այն նշանավոր ռեզոլյուցի-այի մասին, վոր կոմինտերնի II համաշխարհային կոն-գրեսում առաջարկեց Լենինը, և վորն ընդունվեց կոն-գրեսի կողմից), և յերկրորդ, ու այս գուցե և գլխա-վորն է, այդ փաստաթուղթն Ը. Լենինը գրել է մեր յերկրում պրոլետարիատի դիկտատուրայի յերեքամյա գոյությունից հետո: Այդ փաստաթուղթը, հետևապես,

ռուսական հեղափոխության փորձի հիման վրա, ընդհանրացնում եր արդեն լենինիզմի հայացքները պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերության վրա բանվոր դասակարգի կողմից քաղաքական իշխանության նվաճումից հետո: Ընկեր Լենինն իր ուսմունքը նախ և առաջ ընդլայնեց և հարստացրեց նրանով, վոր ռուսական հեղափոխության մեծ դեպքերը թարմ հետքերով նորից հարուցեց և մարքսիզմի հիման վրա լուծեց միջազգային պրոլետարական հեղափոխության խոշորագույն խնդիրները: Իսկ պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերության հարցը, պրոլետարիատի կողմից իշխանության նվաճումից առաջ և հետո, անկասկած այդպիսի արմատական խնդիրներին թվին և պատկանում:

Հիշված փաստաթղթի մեջ ընկ. Լենինը գրում եր, վոր սոցիալ-դեմոկրատները չեն հասկանում «այն ճշմարտությունը, վոր լիովին ապացուցել և թերեխակական մարքսիզմը և լիովին հաստատել և Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության փորձը, այսինքն այն, վոր «անլուր ջափերով մոռացության մատնված, բւժան-բաժան յեղած, տրորված, բոլոր ամենաառաջավոր յերկրներում կյանքի կիսաբարբարոս պայմանների դատապարտված գյուղական ազգաբնակչությունը տրևտեսապես, սոցիալապես, կուլտուրապես սոցիալիզմի հաղթանակով օհնագրգռված լինելով, ընդունակ և վրճուականապես աջակցելու հեղափոխական պրոլետարիատին միայն նրանից հետո, յերբ նա նվաճած կլինի քաղաքական իշխանությունը, միայն նրանից հետո, յերբ նա խոսքը հողատերերի յեվ կապիտալիստների դատը վճարականապես տեսած կլինի, միայն նրանից հետո,

յերբ այդ նվաճած մարդիկ գործնականում կտեսնեն, վոր ունեն կազմակերպված առաջնորդ յեվ պաշտպան, վորք բավականաչափ հզոր յեվ կորովի յե ոգնություն ուղեկավարություն յեվ ուղիղ ճանապարհ ցույց տալու համար»:

Ընկ. Լենինի այս թեզիսն անվիճելի կերպով պատկանում և լենինիզմի ամենահիմնական թեզիսներին թվին:

Հանգամանքների բարենաջող բերումով գյուղացիությունը, հատկապես նրա ղինված մասը—իմպերիալիստական պատերազմից ուժասպառ յեղած բանակը, 1917թ. մեղ բավականաչափ հզոր աջակցություն ցույց տվեց: 1917 թ. հոկտեմբերից անմիջապես առաջ գյուղացիությունը մեղ աջակցում եր ամբողջ մասսայով: «Կորչի պատերազմ» լողունգը ձուլվեց «հողը գյուղացիներին» լողունգի հետ (ըստ Լենինի՝ ազգային հեղափոխության «առանցքը» այս լողունգն եր): Այժմ, իշխանությունը նվաճելուց հետո, յեթե մենք ամբապընդենք մեր տնտեսական ղեկավարությունը գյուղում, կգա մի ամբողջ դարաշրջան, յերբ մեղ համար յերկարատե և հաստատուն կերպով ապահովված կլինի գյուղացիության աջակցությունը: Ըստ Լենինի գյուղացիության հիմնական մասսան ընդունակ և պրոլետարիատին վճարական և հաստատուն, լուրջ և յերկարատե աջակցություն ցույց տալ նրանից հետո, յերբ պրոլետարիատը քաղաքական իշխանությունը նվաճել և: Այս մատնանշումն ահագին նշանակություն ունի: Դա լիովին որվա չարիք և մեղ համար պրոլետարական ղիկտատուրայի մանավանդ այժմյան, նոր փուլի (Ֆազի) ընթացքում: Ճիշտ հենց այժմ և հասել

մեր Խորհրդային Հանրապետությունների միության համար այն ժամանակը, վոր մատնանշած թեզիսի մեջ նախատեսում եր ընկ. Լենինը: Նախ և առաջ հենց այս պիտի հասկանանք, վոր կարողանանք հաշիվ տալ մեզ, թե այժմ ինչ ե նշանակում «յերեսը դեպի գյուղ» լոզունգը:

Ընկ. Լենինը համաշխարհային պրոլետարիատին մատնանշում եր այն հանգամանքը, թե «վերը. մատնանշած յերեք խմբերը միասին վերցրած (առաջին՝ գյուղատնտեսական բանվորները, յերկրորդ՝ կիսապրոլետարներ կամ պարցելային գյուղացիներ, յերրորդ՝ մանր գյուղացիություն) բոլոր յերկրներում կազմում են գյուղական բնակչության մեծամասնությունը»: Ապա ընկ. Լենինը ընդգծում եր նաև կոմունիստների պարտականությունը միջակ գյուղացիության հանդեպ, այն ե՝ պրոլետարիատի ղեկառնությունից շրջանի սկզբին ջեզոճացնել նրան, իսկ հետո աստիճանաբար նրա մի նշանակալի մասը իրենց կողմը գրավել:

Յեթե այս բոլորը ճիշտ եր 1920թ. միջազգային կոմունիզմի համար, ապա ինչքան ավելի ճիշտ ե այն և ինչքան ավելի կարևոր ե մեզ համար, Ս. Խ. Հ. Մ. համար 1925 թ.:

Ընկեր Լենինի այս թեզիսի ըմբռնումը ներկա շրջանի կուսակցական ամբողջ տակտիկայի բանալին ե: Յեթե հասկացել ես այն, ինչ վոր ասում եր ընկ. Լենինը գյուղացիության դեպի պրոլետարիատն ունենալիք վերաբերմունքի մասին, վերջինիս կողմից քաղաքական իշխանության կուռ նվաճումից հետո, այն ու միայն այն ժամանակ կհասկանաս «յերեսը դեպի գյուղ» լոզունգը, այն ու միայն այն ժամանակ կը-

հասկանաս լենինյան կենտր. կոմիտեյի քաղաքականությունն ամենահիմնական դիժը, այն ու միայն այն ժամանակ կհասկանաս իմիջի այլոց և այն, թե վորն ե մեր կենտկոմի և ավելի կամ պակաս պարզություններ իրեն դիտակցող տրոցկիզմի կամ կիսատրոցկիզմի ամենագլխավոր տարբերությունը:

2. ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ, ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ

1921 թ. ընկ. Լենինը մեր յերկրում միությունների դերի և խնդրի մասին յեղած վեճի առթիվ իր հոգվածներից մեկում գրում եր.

—Կոմունիզմն ասում ե՝ պրոլետարիատի ավանդարդը՝ Կոմունիստական կուսակցությունը ղեկավարում ե բանվորների անկուսակցական մասսային, լուսավորելով, պատրաստելով, ուսուցանելով, դաստիարակելով նրան—նախ բանվորներին, ապա նայել գյուղացիներին:

Այս բառերն ես այժմ խիստ կենսական և որվա չարիքը կազմող բնութիվ լի յհն: Նախ բանվորներին, ապա նայել գյուղացիներին! հենց բանն այն ե, վոր այժմ գալիս ե այն ժամանակը, յերբ մենք պետք ե հատկապես ընդգծենք՝ ապա նայել գյուղացիներին:

Մենք յերեք լիովին դո՛հ չենք լինի այն արդյունքներով, վորին հասնում ենք բանվորներին կազմակերպելու և դաստիարակելու ասպարիզում: Մեզ միշտ թըվալու յե, վոր այնուամենայնիվ դեռ բավականաչափ շատ բան չի արված: Այդ հենց այդպես ել պիտի լինի:

Բայց այնուամենայնիվ վոչ մի կասկած չկա, վոր այժմ մեր կուսակցությունը ամբողջ բանվոր դասակարգի մտքերի վրա իշխողն է դարձել: Այդ են ասում բազմաթիվ փաստերը՝ և՛ լենինյան կոչը, և՛ արհմիությունների աշխատանքը, և՛ պրոներական շարժումը, և՛ բան-թըղթակիցների շարժումը և՛ շատ ու շատ ուրիշները: Այս գործն ավելի կամ պակաս չափով ապահովված է, նա գտնվում է կանոնավոր բեկերի վրա: Մենք այժմ ընդհուպ մոտեցել ենք ընկ. Լենինի բանաձևի յերկրորդ կետին՝ «ապա նայեմք գյուղացիներին»:

Ընկեր Լենինը բազմիցս սովորեցրել է մեզ, վոր չի կարելի սոցիալիզմ կառուցել մենակ կոմունիստների ձեռքով: Նա շատ անգամ մատնանշել է այն հանգամանքը, վոր պրոետարական ավանգարդը քաղաքական իշխանությունը հաստատուն կերպով նվաճելուց հետո, իր առաջ մի յերկարատև պատմական խնդիր ունի՝ վերադաստիարակելու այն «մարդկային նյութը», վոր ժառանգություն է ստանում կապիտալիզմից, այսինքն քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաներին սոցիալիզմի համար վերադաստիարակելու յերկարատև, մի ամբողջ դարաշրջան պահանջող խնդիրը:

Ահա դրան է, վոր այժմ ընդհուպ մոտենում ենք:

Հասկանալի չե, վոր գյուղացիական մասսային սոցիալիզմի համար լուսավորելը, պատրաստելը, կըրթելը, դաստիարակելը պիտի կատարվի բոլորովին այլ յեղանակով, քան քաղաքների բանվոր մասսայի դաստիարակությունը: Մենք բոլորս գիտենք, վոր գյուղում վճռական դեր են խաղալու նախ և առաջ տրակտորը, կոոպերացիան, գյուղափոխությունը դանդաղ, բայց

հաստատուն հավաքականացումը (коллективизация), կենդանի յերկարատև փորձով աստիճանաբար, բայց հաստատուն կերպով գյուղացիներին ապացուցելը, վոր կոլլեկտիվ տնտեսությունը գերադաս է անհատականի հանդեպ: Մենք այստեղ առայժմ չենք խոսում գյուղացիությունը լուսավորելու և վերադաստիարակելու յեղանակների ու մեթոդների մասին, մենք դեռևս խոսում ենք միայն գյուղացիական մասսաների լուսավորության, պատրաստության, վերամշակման, դաստիարակության խնդրի մասին, մի խնդիր, վոր միայն այժմ է մեր առաջ կանգնում, իբրև դարաշրջանի ամենակարևոր խնդիրներից մեկը:

Այս պիտի հասկանալ, վորպեսզի կարելի լինի լավ հաշվի առնել, թե ինչ է նշանակում «յերեսը դեպի գյուղ» լոզունգը: Այս լոզունգի նպատակը վոչ մի դեպքում գյուղացիների ձայների դեհիկ կերպով վորսալը չե: Բանն այն չե, վոր լոկ «ագիտացիա» անենք գյուղացիության մեջ: Այս լոզունգը չի նշանակում նաև «գյուղացիական թեքում»: Դա վոչ մի դեպքում չի նշանակում սայթաքել և պրոետարական դիկտատուրայի հենց սոցիալական բովանդակության մեջ ինչ վոր դասակարգային տեղափոխություն առաջ բերել: Վոչ. պրոետարիատի դիկտատուրայի, ճենց լայն հասկացած, այսինքն Լենինի ձեռքով հասկացած, իսկական ամբապնդման օգնեքն այժմ պահանջում են, վոր կուսակցության քաղաքականության որիեմտացիան լինի՝ «յերեսը դեպի գյուղ»:

Այս իմաստով «յերեսը դեպի գյուղ» լոզունգը որվա անցողիկ նշանաբան չե, այլ պրոետարական

գրկատառութեան դարգացման մի ամբողջ շրջանի համար հիմնական որոնետացիա: Ով այս չի հասկացել, նա վռնիչ չի հասկացել:

3. ՅԵՐԵՍԸ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ—ԼՐՁՈՐԵՆ,
ՅԵՐԿԱՐԱՏԵՎ, ԸՆԴՄԻՇՏ

Վերը մատնանշած իմաստով «յերեսը դեպի գյուղ» նշանաբանը վռն միայն լուրջ և յերկարատև, այլ նույնիսկ, կարելի չի ասել, «մշտական» և, այսինքն մինչև այն ժամանակ, քանի դեռ սոցիալիզմը մեզ մոտ վերջնականապես չի հաղթանակել, բառի լիակատար իմաստով իրականութիւն չի դարձել: Յեւ վռնչքան վոր մեր քաղաքների տնտեսութեան մեջ ավելի հաղթանակի սոցիալիզմը, այնքան եւ մենք ավելի շատ ենք ուշադրութիւն դարձնելու գյուղի վերամշակման, վերաշինման, վերադաստիարակութեան խնդրի վրա:

Այն հանգամանքը, վոր մենք վճռականապես ընդունում ենք կապիտալիստական հասարակութեան մեջ մեծ քաղաքների հառաջադիմականութիւնը, մեզ չի խանգարում մտցնել մեր իդեալի մեջ (յեւ մեր գործունեութեան ծրագրի մեջ, վորովհետև անիրագործելի իդեալները մենք թողնում ենք Պ. Պ. Ստրուվիներին և Բերդյաևներին) քաղաքի յեւ գյուղի հակադրութեան վրջնացումը: Ժիշտ չէ, թե դա համազոր և գիտութեան և գեղարվեստի դանձերից հրաժարվելուն: Ժիշտ հակառակը՝ դա անհրաժեշտ է, վոր կարելի լինի այդ դանձերն «ամբողջ ժողովրդին մատչելի» դարձնել, վորպէսզի հնարավոր լինի վռնչացնել միլիոնավոր գյու-

ղական բնակչութեան այն ոտարացումը կուտարայից, վոր Մարքսն այնքան հաջող կերպով «գյուղական կյանքի ապշութիւն (իդիոտիզմ) և անվանել»:

Այս եր սովորեցնում մեզ ընկ. Լենինը (Աշխատութիւնների ժողովածու, հատոր, IX, էջ 93):

Ընկ. Լենինը մեր կուսակցութեան ծրագրի մեջ մի կետ է մտցրել, վորտեղ ասված է. «Ռ. Կ. Կ. այս հակադրութեան վռնչացումը նկատում է իբրև կոմմունիստական շինարարութեան արմատական խնդիրներից մեկը և ընդհանուր միջոցների կողքին անհրաժեշտ է համարում, վոր լայն յեւ համալսարան կերպով առդունգեցնական բանվորները կոմմունիստական շինարարութեան կողմէն յերկրագործութեան մեջ»:

Ամբողջ բանը նրանում է, վոր հասկանանք, թե արդոք մտնում ենք պրոլետարական գրկատառութեան դարգացման այն ֆազի մեջ, յերբ հենց այդ խնդիրները յեւակեց ունենալով պիտի ձևակերպենք գյուղի վերաբերմամբ ունենալիք մեր մոտակա քաղաքական տակտիկան: Բանը նրանում չէ, վոր իբր թե չենք տեսնում այն վտանգը, վոր այլասերում է պրոլետարական գրկատառութեան մանր-բուրժուազիայի ուղղութեամբ, բանը նրանում չէ, վոր իբր թե չենք տեսնում այն վտանգը, վոր բանվորական պետութիւնը կերպարանափոխում է սահմանափակ գյուղական քաղքենիութեան թագավորութեան: Այս բոլոր վտանգները մենք տեսնում ենք: Այլ բանը նրանում է, վոր այժմ գյուղի վերաբերմամբ ունենալիք ճիշտ քաղաքականութեամբ վերջնականապես ամրապնդենք պրոլետարիատի քաղաքական իշխանութիւնը և իրական հնարավորութիւն ստեղծենք տնտեսական ուղիներում

վերածնելու գյուղը, իհարկե, մի շարք տարիների ընթացքում յերկարատև աշխատանք թափելով:

Կրկնում եմ, այս իմաստով «յերեսը դեպի գյուղ» նշանաբանը անցողական չե, այլ «հավիտենական» լողունգ, վոր չի կարող հրապարակից վերանալ, մինչև վոր մի յերկրում սոցիալիզմը տնտեսապես լիովին չհաղթանակի: Այս իմաստով պիտի հասկանալ նաև այն, ինչ վոր իր վերջին հոգովածներում Լենինը գրում եր գյուղացիության կոոպերացման (кооперирование), կոոպերատիվ «կարգի», գյուղում սոցիալիզմի խաղաղ թափանցման մասին:

Այս ասելով մենք բոլորովին ազգային սահմանափակության մեջ չենք ընկնում: Մենք շատ լավ գիտենք, վոր մեր յերկրում սոցիալիզմի վերջնական տնտեսական ճաղքանակը հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ պրոլետարական հեղափոխությունը կը հաղթանակի դարձյալ միջանի վճռական նշանակություն ունեցող յերկրներում: Ազգային (այս բառի լենինյան հասկացողությամբ, այսինքն համաժողովրդական, ամբողջ ազգի «ստորին խավերը» խորապես ընդգրկող) հեղափոխությունը հակադրել միջազգային հեղափոխության, ինչպես յերբեմն անում եր ընկ. Տրոցկին, նշանակում ե հարցը լենինիզմի վոգով չը դնել: Հարցի այն կերպ դնելը, վոր այժմ իր արտահայտությունն ե գտնում «յերեսը դեպի գյուղ» բանաձևի մեջ, վոչ մի դեպքում չի բացասում, այլ յենրադրում ե միջազգային պրոլետարական հեղափոխության տակտիկան:

«Փրկություն հնարավոր ե միայն միջազգային, սոցիալիստական հեղափոխության այն ճանապարհին,

վորի վրա վոտք ենք դրել»,—այսպես եր գրում ընկ. Լենինը «Մեր որերի գլխավոր խնդիրը» հոգովածում (հատոր XV, էջ 165—166), իր կարճատև դադարի (передышка) թեորիայի հիմնավորմանը մոտենալով:

«Ինչքան վոր մենակ ենք, մեր անելիքն այն ե, վոր պահենք հեղափոխությունը, պահպանենք նրա թիկունքում սոցիալիզմի թեկուզ վորոշ ամրոց, ինչքան ել վոր այն թույլ ու չափավոր լինի, մինչև վոր մյուս յերկրներում կհասունանա հեղափոխությունը, մինչև վոր կհասնեն մյուս ջոկատները: Բայց պատմությունից սպասել, վոր նա զանազան յերկրների սոցիալիստական ջոկատները խիստ աստիճանավորությամբ և համաչափությամբ առաջ շարժի,—կնշանակի դադափար չունենալ հեղափոխության մասին կամ հիմարությամբ հրաժարվել սոցիալիստական հեղափոխության աջակցելուց»: (Եջ 231—232, հ. XV):

Այստեղից ընկ. Լենինը յեղրակացում եր, վոր մեր տակտիկան «վորոշվում ե, իբրև զորաշարժումների, սպասումների և յետ քաշվելու տակտիկա»: Այս հայացքներն ինքն ընկ. Լենինը կոչում եր «կարճատև դադարի թեորիա»:

«Յեթի համաշխարհային պատմական մասշտաբով նայենք, այն ժամանակ կասկածից դուրս ե, վոր մեր հեղափոխության վերջնական հաղթանակն անհուսալի կլինի, յեթե նա մենակ մնար, յեթե մյուս յերկրներում հեղափոխական շարժում չլիներ»: (Լենին, հ. XV, էջ 129):

«Մենք միայն այն ժամանակ վերջնական հաղթանակ կտանենք, յերբ վերջապես մեզ հաջողվի վերջնականապես ջախջախել միջազգային իմպերիա-

լիզմը, վոր հենվում է տեխնիկայի և կարգապահու-
թյան վիթխարի ուժի վրա»։ (Եջ 187. 1918 թ. ապրի-
լի 23-ին Մոսկ. Խորհրդում արտասանած ճառից)։

«Մենք միշտ վորոշակի ասել ենք, վոր այս հաղ-
թանակը հաստատուն լինել չի կարող, յեթե միայն
նրան չաջակցի Արևմուտքի պրոլետարական հեղափո-
խությունը, վոր մեր հեղափոխության ճիշտ գնահա-
տությունը հնարավոր է միայն միջազգային տեսակե-
տից։ Վորպեսզի հաստատուն հաղթանակի հասնել կա-
րողանանք, մենք պիտի ջանանք պրոլետարական հե-
ղափոխության հասնել բոլոր կամ գոնե միջանի
գլխավոր կապիտալիստական յերկրներում. և ահա յե-
ռամյա կատաղի, համառ պատերազմից հետո մենք
տեսնում ենք, թե ինչ տեսակետից մեր գուշակու-
թյունները չարդարացան և ինչ տեսակետից արդա-
րացան... Յերևաց, վոր վոչ մեկ, վոչ ել մյուս կողմը,
վոչ Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը,
վոչ ել մնացած ամբողջ կապիտալիստական աշ-
խարհը վոչ հաղթանակ տարան, վոչ ել պարտություն
կրեցին, ու միաժամանակ յերևաց, վոր յեթե մեր
գուշակությունները պարզ, արագ և ուղիղ ձևով չը-
կատարվեցին, գոնե նրանք այն չափով կատարվեցին,
ինչ չափով վոր մեզ ավին գլխավորը, վորովհետև
գլխավորն այն էր, վոր պահպանվի պրոլետարական
խշխմանության գոյության հնարավորությունը... Նույն-
իսկ այն դեպքում, յերբ ամբողջ աշխարհում սոցիա-
լիստական հեղափոխությունը ձգձգվի»։ (Եջ 189,
«Մեր արտաքին ու ներքին դրությունը և կու-
սակցության խնդիրները» ճառից։ Մոսկվայի կոնֆե-
րենցիա, 1920 թ. նոյեմբերի 20)։

Այսպես ելին ընկ. Լենինի հայացքները, Նույնիսկ
նա իր հանճարեղ ներքնատեսությունով (ինտուիցիա)
մեր հեղափոխության սկզբին գերադնահատում էր մի-
ջազգային պրոլետարական հեղափոխության դարգաց-
ման տեմպը. Նույնիսկ նա (ինչպես, սակայն, իր ժա-
մանակին և Մարքսը) հեղափոխության սկզբին ամիս-
ների հաշիվ էր անում այնտեղ, վորտեղ պետք էր,
գոնե, տարիների հաշիվ անել։ Դեռևս նշանավոր «Նա-
մակ ամերիկյան բանվորներին» դիմումի մեջ (1918 թ.
ոգոստոսի 20) ընկ. Լենինը գրում էր.

«Մենք գիտենք, վոր յիվորպական պրոլետարա-
կան հեղափոխությունը կարող է մոտակա օաբարճե-
րում (ընդգծումը մերն է. Գ. 2.) դեռևս չբռնկվել,
ինչքան ել վոր նա վերջերս արագորեն է աճում։ Մենք
մեր հույսը կապում ենք միջազգային հեղափոխության
անխուսափելիության հետ, բայց այս բոլորովին չի
նշանակում, վոր մենք հիմարի նման մեր հույսը կա-
պում ենք վառոյալ կարճ ժամանակամիջոցում կատար-
վելիք հեղափոխության անխուսափելիության հետ...
Մենք պաշարված ամբողջ մեջ ենք, քանի դեռ մեզ ոգ-
նության չեն հասել միջազգային սոցիալիստական հե-
ղափոխության մյուս ջոկատները»։

Միևնույն ժամանակ ընկ. Լենինը կարողանում
էր դեռ նոյեմբերյան հեղափոխության հենց առաջին
շաբաթները բացատրել մեզ, թե ինչու չարդարացան
Մարքսի ու Ենգելսի այն գուշակությունները, թե՛
«Ֆրանսիացին կսկսի, իսկ գերմանացին կավարտի»,
թե ինչու «գործերն այլ կերպ դասավորվեցին, քան
այդ սպասում էլին Մարքսն ու Ենգելսը»։ Նրանք մեզ,
ռուսական աշխատավորներին



կարգերիս հանձնել են միջազգային սոցիալիստական հեղափոխութեան ավանգարդի պատվավոր դերը, և մենք այժմ պարզ տեսնում ենք, թե ինչքան հեռու չի գնալու հեղափոխութեան զարգացումը. ուստի սկսել եմ գերմանացիներին, ֆրանսիացիներին, անգլիացիներին կավարտեն, և սոցիալիզմը կհաղթանակի...» (Լենին, հ. XV, էջ 87):

Արդեն շատ շուտ ընկ. Լենինն սկսեց «Ժամանակ» ֆակտորն ավելի ճիշտ գնահատել:

«... Հեղափոխութեանը այնքան շուտ չի գնալու, ինչքան մենք սպասում էինք: Այս պատմութեանն ապացուցեց: Այս պիտի կարողանալ իբրև փաստ ընդունել: Պիտի կարողանալ հաշիվ առնել այն, վոր առաջավոր յերկրներում համաշխարհային սոցիալիստական հեղափոխութեանը չի կարող այնպես հեշտութեամբ սկսվել, ինչպես Ռուսաստանում... Այսպիսի յերկրում հեշտ եր հեղափոխութեան սկսելը. այդ նշանակում եր մի փոքրիկ փետուր վերցնել... Այնտեղ մենք գեռես նոր ենք մոտենում սոցիալիստական հեղափոխութեան սկզբնավորութեան տանջալի շրջանին»: Այսպես եր ասում ընկ. Լենինը կուսակցութեան VII համագումարում (Վ. Ի. Լենին, հ. XV, էջ 192):

Արդեն «Ձախութեան մանկական հիվանդութեան մեջ» (1920 թ.) ընկ. Լենինը նախատեսնում եր, վոր «պրոլետարական հեղափոխութեան առաջավոր յերկրներին թեկուզ մեկում հաղթանակելուց հետո, ամենայն հավանականութեամբ, կտրուկ բեկում տեղի կունենա, այսինքն՝ շուտով դրանից հետո Ռուսաստանը կգառնա վոչ թե րբինակելի, այլ դարձյալ հետամնաց (թուրհորդային) և սոցիալիստական իմաստով՝ մի յերկիր» (Վ. Ի. Լենին, հ. XV, էջ 115):

«Ժամանակ» ֆակտորն այժմ բոլորս սովորել ենք ավելի իրական յեղանակով գնահատել: Այդ սովորել ե այժմ ամբողջ Կոմիտեները: Մնալով միջազգային պրոլետարական հեղափոխականներ, — վորովհետև առանց այդ լենինիզմ չկա, — մենք շատ լավ գիտենք, վոր մեր (այսինքն Ս. Խ. Հ. Մ.) վերջնական հաստատուն հաղթանակը հնարավոր ե, յերբ միջանի վճռական նշանակութեուն ունեցող յերկրներում սոցիալիզմը կհաղթանակի: Յե՛վ հենց այն պատճառով, վոր պրոլետարական հեղափոխութեան այժմյան շրջանում մեր կուսակցութեան տակախդի հարցը մենք դնում ենք յենելով միջազգային պրոլետարական հեղափոխականների խնդիրներին, այն, հենց այդ պատճառով, «յերեսը դեպի գյուղ» լոզունգն այժմ առաջադրում ենք իբրև «լուրջ և յերկարատև» լոզունգ:

Չմոռանանք այն, վոր ընկ. Լենինն ասում եր, թե հնարավոր ու նույնիսկ հավանական ե, վոր մեր Սոցիալիստական Հանրապետութեանների Միութեան դեմ պատերազմների նոր շրջան (ցիկլ) բացվի: Միջազգային անցուդարձում վերջին ամիսների ընթացքում յերբեմն յերևան են գալիս բավական գծեր, վորոնք հենց այդ հեռանկարն են հիշեցնում: Կասկածից դուրս ե, վոր յեթե մեր Ս. Խ. Հ. Միութեանը նորից յենթակա դառնա իմպերիալիզմի ուղղման ուղղակի հարձակման, այն ժամանակ այդ կոնֆլիկտի յելքը նախ և առաջ կախված կլինի յերկու ֆակտորից՝ 1) միջազգային բանվոր դասակարգի մեր հանդեպ բռնելիք դերքից, 2) Ս. Խ. Հ. Մ. գյուղացիութեան վերաբերմունքից դեպի պրոլետարական ղիկտատուրան, այդ նոր պարագաներում:

Ահա հենց այս մեծ տակտիկական խնդիրներից յեկեկով է, վոր այժմ պիտի լուծենք ընթացիկ ընդհանուր քաղաքական և տնտեսական հարցերը, վորոնք մեր տակտիկայի միջուկն են կազմում: Մեր տակտիկայի հաջողությունն այժմ պայմանավորված է վոչ թե պրոլետարիատի ու գյուղացիության փոխհարաբերությամբ «ընդհանրապես», այլ գյուղացիության վերաբերմունքով դեպի մեր յերկրի բանվոր դասակարգը՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելուց և ամրապնդելուց հետո:

4. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՅԱԶԸ (ՓՈԽԼԸ).

Այս փուլի նորությունն այն է, վոր մենք ընդհուպ մոտեցել ենք տնտեսական հարցերին: Բանվորա-գյուղացիական բլոկի ամբողջությունն այժմ պայմանավորված է նախ և առաջ, յեթե վոչ բացառապես*, տնտեսական հաջողություններով, իրական տնտեսական գրավումներով:

Կար ժամանակ, յերբ մեր բանվոր դասակարգի և գյուղացիության միության ամբողջունը պայմանավորվում էր քաղաքական պաթետիկայի ընթացքով: Պետք էր ջանքախել ընդհանուր թշնամուն—սպիտակ գվարդիական բուրժուազիային և կալվածատերե-

* Հասկանալի չէ, վոր չպիտի նվազեցնել նայել խորհուրդների տշտեժացման, ստորին ապարատի բարելավման, կամայականության վոչնչացման, կոոպերացիայի մեջ կամավոր սկզբունքի իսկական կիռառման նշանակությունը յեվ այլն:

րին: Վերջին տարիներին ընթացքում, քաղաքացիական պատերազմներին վախճանից անմիջապես հետո, այդ միության ամբողջունը նշանակալի չափով պայմանավորվում էր մեր միջազգային քաղաքականության: Այդ շրջանում մենք լիովին բավարար քննություն տվինք: Գյուղացին զգում է և գիտե, վոր մեր կառավարությունն ուղիղ և գյուղացիության համար ձևոնտու միջազգային քաղաքականություն է վարում՝ 1) փրկել է նրան ստրկությունից, վորի մեջ էր ընկնելու նա, յեթե ստիպված լիներ ցարական պարտքերը վճարել, 2) պատերազմներ չի սկսում, 3) շատ մեծ բանակ չի պահում, 4) հանձնու միջազգային բանվոր դասակարգի լուրջ դաշնակից է շահել, 5) միջազգային ասպարիզում ուղիղ կերպով ծանրացնում է Ս. Խ. Հ. Մ., իբրև մեծ պետության, տեսակարար կշիռը:

Իսկ ահա այժմ մենք մի այլ քննություն ենք տալիս:

Բանվորա-գյուղացիական բլոկը քաղաքացիական պատերազմի քննության բովից հաջողությամբ անցավ: Այդ բլոկը միջազգային քաղաքականության քննության բովից անցավ (և անցնում է) նույնպես բավական հաջող: Այս հարցերի մասին մտածող ամեն մի գյուղացի գիտի, վոր կոմունիստները կալվածատերերի և բուրժուազիայի դեմ մղվող քաղաքացիական պատերազմը հաջող տարան, գիտե նաև, վոր նրանք ուղիղ միջազգային քաղաքականություն են վարում:

Իսկ ահա յերբ խնդիրը վերաբերում է տնտեսական հարցերին, արդյոք մեր գյուղացին նույն համոզումը յերևան բերում է Կարծում է արդյոք այդ գյուղացին, վոր մենք, կոմունիստներս, տնտեսու-

թյունն ել այնքան հաջող ենք վարում, ինչքան քաղաքացիական պատերազմը և միջազգային քաղաքականությունը:

Վո՛չ, նա դեռ այդ կարծիքին է:

Յեվ ահա հենց այս է հարցի կենտրոնը:

Այժմ բանվորա-գյուղացիական բռնկման տնտեսական և կուլտուրական ֆրոնտի (դպրոց) փորձության բովից է անցնում:

Մոտ է այն ժամանակը, յերբ վերջապես մեր տնտեսությունը նախապատերազմական մակարդակին կհասնի: Արդեն յերկու-յերեք տարի հետո մի շարք ասպարեզներում մենք այդ մակարդակից կսկսենք անցնել այն կողմը: Հենց այն ժամանակ իսկապես կծագի այն հարցը, թե՞ «դեպի վճիռ կողմն ենք անում», այսինքն դեպիվոր կողմն է աճում մեր տնտեսականը, արդյոք դեպի սոցիալիզմ: Յերբ մեր խորհրդային տնտեսականը (եկոնոմիկան) (ի թիվս դրա նաև գյուղատնտեսությունն ու կոոպերացիան) քանակապես նախապատերազմական մակարդակին կհասնի, այսինքն յերբ մոտավորապես 1913-14 թ. թ. չափերով տնտեսական «հագեցումը» առձեռն կլինի, ահա հենց այն ժամանակ հարցը կարող կկանգնի մեր առաջ, թե ո՞վ ում: Մենք ենք, վոր վերջնականապես հաղթել ենք նոր բուրժուազիային, թե՞ նոր բուրժուազիան է, վոր ամրապնդվել է առաջին դիրքերում՝ հարձակումը մեր վրա շարունակելու համար: Այս հարցը հենց այժմ ել նշանակալի չափով կանգնած է մեր առաջ: Առաջժ լիակատար համոզմունքով միայն մի բան կարելի չէ ասել՝ յեթե մենք ուղիղ լենինյան քաղաքականություն վարենք, այսինքն՝ յեթե մեր քաղաքական մերձեցումը

գյուղացիության լիովին ձիշտ լինի, յեթե մենք առաջվա նման ամրապնդենք դիսպոզիցիոն հրամանատարական բարձունքները (արդյունագործությունը, բանկերը և այլն), այսինքն այն բոլոր շահերը, վոր հաղթանակը վերջնականապես մերն է լինելու, գյուղացիությունն ինքն ել զարգացման վորոշ մոմենտից սկսած վերջնականապես կհամոզվի, վոր տնտեսական ասպարիզում յեվա պրոլետարական իշխանությունը նրա համար ամենացանկալին և ամենաձեռնտունն է:

Իսկ առաջժ բոլոր հարցերի հարցը հենց այն է, վոր կարողանանք հաջողակ կերպով անցկացնել բանվորա-գյուղացիական բռնկման ժամանակ դասակարգի և գյուղացիության փոխհարաբերության ներկա ֆազից (փուլից):

Այստեղից բխում են գյուղում ունենալիք մեր քաղաքականության հետևյալ հիմնական խնդիրները.

1. Գների փաղափականություն. կրկին ու կրկին անգամ եժան գների քաղաքականություն: Կրկին ու կրկին անցում եժան գների քաղաքականության: Ինչ պայմանով ել վոր լինի, պիտի քաղաքի արդյունաբերության արդյունքների (պրոդուկտների) գներն իջեցնել: Այս ուղղությամբ պետք է համարձակ և վճռական քաղաքականություն, առանց ամենափոքր տատանման, իհարկե տնտեսական հնարավորությունների թույլ տվածի չափով (արտադրության պայմաններ, ինքնարժեք և այլն)*:

*Մի գյուղացու համակում (ընկ. Ա. Նիկոնովից) կարդալիս հետեվյալ փոքրիկ պրեյս-կուրանտը (նախապատերազմական ու աջժամյան գների համեմատությունը):

Վոշիկներ 5 ու. յեվ վոշ 10 և 18 ու., չի՞ 10 յեվ վոշ 10

2. Հողագինարարություն յեվ հողագտագործման հարցեր. յեռանդագլին շշինել հողը, հաշվի առնելով տեղական պայմանները, գործելով ամեն քայլափոխում հնարավոր չափով սերտ կապված գյուղացիական ժամայի հետ: Ձեռք առնել բացարձակապես բոլոր անհրաժեշտ միջոցները, վոր հողից ոգտվելու ձևերը գյուղացու համար ապահովեն տնտեսության առավել կայունություն, վորպեսզի նա կարողանա առանց մեր նայելու իր ամբողջ աշխատանքն և իր բոլոր նյութական միջոցները գործադրել մշակելիք հողի վրա, վորպեսզի նա կարողանա ավելի հաստատուն հիմքի վրա կառուցել իր սեփական բյուջեն:

3. Բարելավել գյուղի բաղաձայն գրությունը, այսինքն իրոք աշխուժացնել գյուղական և շրջանային խորհուրդները: Ապահովել այն, վոր գյուղացիները հնար ստանան բավական քանակով անկուսակցականներ անցկացնել այդ խորհուրդները: Միատեմատիկ պայքար մղել կամայականության դեմ և հոգուտ խորհրդային որինականություն:

4. Նույնը, ել ավելի մեծ չափով կոոպերացիայի վերաբերմամբ: Ներկա մոմենտում կոոպերացիան մեզ մոտ հաճախակի №2 պետական առևտուր է, վորը ժողովրդին կոոպերացման յենթարկելու ձգտումներ ցույց տալիս, բայց իրականում առայժմ չի կոոպերացնում:

50. կ., մահուդ 4 ռ. յեվ վոչ Թե 12 ռ., Թամբարու բառորդ ֆունտը, 6 յեվ վոչ Թե 18 կ., լուցկիներ, տամյալը 3 յեվ վոչ Թե 20 կ., նավթ 2 յեվ վոչ Թե 7 կ., աղ փուլը 30 կ. յեվ վոչ Թե 1 ռ. 20 կ., անիվների յերկաթը 10 յեվ վոչ Թե 30 կ., միու պայտելը 13 կ. յեվ վոչ Թե 1 ռ. 20 կ., շաքարը 14 յեվ վոչ Թե 33 կ. յեվ ալն:

Իսկական կամավորությունը և իսկական ընտրողականությունը կոոպերացիայի մեջ մոտակա որերի հերթում են դրված:

5. Հարկային սխտեմի գործում լուրջ բեֆորմ և հնարավոր առավելագույն (մաքսիմալ) նվազեցում գյուղական հարկերի քանակի:

6. Արտաֆին առեկտրի վերադիր ծախսերի նվազեցման հարցը պիտի լրջորեն դնել և լուծել, վորպեսզի արտաքին առևտրի մենաշնորհը գյուղացու համար կարելի լինի ավելի ձեռնտու դարձնել:

7. Գյուղական լավ դպրոց:

8. Գյուղացիական մասսայական բերք: Առաջին հաջող քայլերն արված են: 1924 թ. նոյեմբերի 1-ին Ս. Խ. Հ. Մ. մեջ մենք ունեյինք 583, ի թիվս վորոնց 135 գյուղացիական: $6\frac{1}{4}$ միլիոն ընդհանուր տիրաժից, գյուղացիական հրատարակություններինը հավանար եր 1,300,000-ի: Բայց սա միայն սկիզբն է: Այժմ մեր մոտ լրագրները դառնում են հավաքական (կոլլեկտիվ) կազմակերպող, իրական ղեկավար կենտրոն: Մեր մոտ լրագիրն սկսում է այն դերը խաղալ, ինչ վորը Լենինը բայլշևիզմի արշալուսին իր «Ինչ անել» բրոշյուրի մեջ քարոզում եր բայլշևիկական մամուլի որդանների համար,—միայն շատ ավելի վիթխարի մասշտաբով, քան այդ կարող եր մեզանից վորևե մեկը յերազել: Այս գործը մեծ թափով առաջ մղելը կուսակցության խոշորագույն խնդիրն է:

9. Գյուղական կոմյետիտությունը. Գյուղում կոմյետիտմիությունների կազմակերպությունների հախուռն աճումը անխուսափելի յէ: Արդեն այժմ Ռ. Լ. Կ. Յե. Մ. ունի 6,000 բանվորական և 24,000 գյուղական

բջիջ: Այս աճումը ուրախացնող յերևույթ ե: Միայն պետք ե, իհարկե, ժամանակին միջոցներ ձեռք առնել, վոր շարժումը անկախ մեր միության կամքից չուռճանա և պորօկտաւական աղղեցությունը նրանում անպայման ապահովված լինի:

10. Նույնը նաև գեղջկուհիների մեջ աշխատելու գործի մասին:

Դյուղատնտեսական վարկ, գյուղատնտեսական կոոպերացիա, գյուղթէթակից, գյուղական դպրոց, գյուղական բջիջ, կոմյերիտմիություն, ագրոնոմիա, վոռոգման աշխատանքներ (մենք արդեն սկսել ենք միքիչ մոռանալ այն, ինչ վոր այս առթիւ ասում եյինք ներկա տարվա աշնանը, յերբ հայտնի դարձավ անբերրիությունը, մինչդեռ առաջիկա տարվա բերքի առաջին նշաններն այնպես են, վոր մենք վոչ մի դեպքում չըպիտի մոռանանք մելիորատիւ աշխատանքների մասին), գյուղական կուսբջիջ, գյուղի անկուսակցական գյուղացիների գրավումը դեպի գյուղխորհուրդ— ահա այն հարցերը, վորոնք այժմ հերթական են:

Այս պորբլեմներն ընդունելով իբրեւ յեկակետ, պիտի նախապատաստել յեւ անցկացնել խորհուրդների համամիութենական մոտակա III համագումարը: Այս խնդիրները յեկակետ ընդունելով ե միայն, վոր կարելի յե ձիշտ գնահատել նաև համամիութենական ուսուցչական համագումարը:

Միայն այսպիսի քաղաքականությունն ե, վոր տանում ե դեպի պետական արդյունաբերության զարգացումն ու աճումը: Միայն այս խնդիրները յեկակետ ունենալով մենք կարող կլինենք արդյունաբերական պրոլետարիատի սոցիալական հզորության խսկական

աճմանը, կենտրոնացմանն ու մեծացմանը հասնել: Միայն այսպիսով մենք կկարողանանք նեպի (նոր տնտեսական քաղաքականության) պայմաններում ամրապնդել պրոլետարական դիկտատուրան: Բոլոր այն կեղծ-արմատական ֆրադները, վոր ներկայացնում են գյուղացիությունն իբրև «կռո», վորին ներողամտաբար ընդառաջում ե «խակական պրոլետարը», բոլոր այն կեղծ-ձախակողմյան ֆրադները, վոր իբրև թե գյուղը միայն «գաղութ» ե պրոլետարիատի համար,— լինինիդմի հետ վոչ մի կապ չունեն:

Այդ մենշևիզմ ե աստառի կողմից *:

Պրոլետարական իշխանության սոցիալական բնույթը պիտի հինը մնա: Բանվոր դասակարգի և գյուղացիության միությունը պիտի ամրապնդվի զարգացման նոր աստիճանի վրա: Աշխատանքի նոր մեքողներ, քաղաքականության լենինյան հին ճիմուճներ:

5. ՆՈՐ ԳՅՈՒՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ:

1920-21 թ. թ. ևս մենք տեսանք այն ժամանակվա գյուղի քաղաքական «ակտիվության» աճումը: Այդ իր արտահայտությունը գտավ Միբրի բավականաչափ հայտնի դեպքերում, ապա Կրոնշտադտում, հետո Տամբուլի նահանգում և այլն: Դա «ակտիվության»

* Սրանում համոզվելու համար բավական ե ծանոթանալ «Сол. Вестник»-ի վերջին համարների պ. պ. մենշևիկների այն հողվածների հետ, վորոնք նվիրված են դյուղացիությանը:

աճումն է անկման դիմող տնտեսության ֆոնի վրա: Դա խորհ. իշխանության առաջին (և հուսանք-վերջին) մեծ ներքին կրիզիսն էր, ինչպես բնորոշեց այն ժամանակվա գրությունը Վ. Ի. Լենինը:

Այժմ մեր առաջն է գյուղի ակտիվության աճումը զարգացման գիմնող տնտեսության ֆոնի վրա, տնտեսապես կազդուրվող գյուղի ֆոնի վրա:

Այժմ գյուղի քաղաքական ակտիվության այս աճումը կարող է ընթանալ և կընթանա պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման ուղիով, յեթե միայն մենք խոշոր սխալներ չանենք, յեթե մենք մեղ պարզ հաշիվ տանք, վոր գյուղի քաղաքական ակտիվության կենդանացումը յերկու տեսակ է լինում—«տամբուլ-կրոնշտադայան» և այժմյանը:

Նոր գյուղը տնտեսապես ամրանում է: Ցանքի տարածություններն աճում են, Առանձին շրջաններ (որինակ՝ Ուկրաինան) արդեն համարյա ամբողջովին մոտեցել են 1916 թ. մակարդակին: Ասենք հենց ընդհանուր առմամբ ել վերցրած ամբողջ Ս. Խ. Հ. Մ. մեջ ցանքի տարածությունը հասել է արդեն նախապատերազմականի 87 տոկոսին:

Տեխնիկական, գյուղատնտեսական և շուկայի կուլտուրաների արագ աճումնամեն կասկածից դուրս է: Անասնապահությունը գրեթե հասնում է 1916 թ. մակարդակին: Նույնիսկ 1924 թ. անբերրիությունը չըկանգնեցրեց, այլ միայն դանդաղեցրեց գյուղատնտեսության աճման տեմպը: Դյուղն սկսում է շարունակ ավելի ու ավելի բավարար սնվել: Դյուղն որակյալ աճն մի հասակավոր շնչի համար 1910-20 թ. սպառում էր 3,594 կալորի, 1920-21 թ. 3387, 1921-22 թ. 3053,

1922-23 թ. 3819, 1923-24 թ. 4040: Ձի չունեցող տնտեսությունների քանակը նվազում է, մեկ և յերկու ձի ունեցող տնտեսությունների քանակը թեև դանդաղ, բայց այնուամենայնիվ աճում է:

Մի խոսքով նոր գյուղը տնտեսապես բարձրանում է: Յեթե զարգացման թափն աչապես լինի, ինչպես մչնչև այժմ,—գուցե, նույնիսկ, ավելի աճե, —այն ժամանակ գյուղատնտեսության զարգացման հեռանկարներն իրոք վոր հոյակապ են:

Ցանքս չունեցող, թույլ տնտեսությունների քանակը նվազում է, իսկ միջակ տնտեսություններն աճում են: Քանակապես աճել է միջակների խմբակը: Այս էն հաստատում 1924 թ. բոլոր թվական սովյալները:

«Յերեսը դեպի գյուղ»—այդ չի նշանակում յերեսը միայն դեպի միջակը, այլ այդ համենայն դեպս, նշանակում է յերեսը ճայել դեպի միջակը, յերեսն անայլման ճայել դեպի միջակը: Հոկտեմբերյան հեղափոխությունն առաջ ընթացավ «իշխանությունը բանվորներին և աղբաղ գյուղացիներին» նշանաբանի տակ: Բայց այդ չի նշանակում, վոր «աղբաղ» գյուղացիները ցանկանում են հենց այդպես ընդմիշտ աղբաղ մնալ: Հասկանալի յե, վոր մեր խնդիրն էլ յերեսը այն չե, վոր նրանց ընդմիշտ աղբատների շարքում թողնենք: Դյուղի յերկու հակադիր բեկոներն անկասկած աճում են: Առայժմ վորոշ վայրերում աճում է ուժեր է հավաքում համբան (կուլակը):

Նրա դեմ մղվելիք պայքարը, առանձնապես տնտեսական ասպարիղում, պիտի կազմակերպենք իր ժամանակին ավելի սխտեմատիկ կերպով, քան այդ ա-

քել ենք մինչև այժմ: Կուլակի դեմ մղվելիք պայքարը մեզ համար անբարենաջող պայմաններում, կարող ե նույնիսկ մի օտեւ տարիներ ընթացքում գյուղի քաղաքական պայքարի ավանսցենան գրավել (նախարեմը): Բայց հենց համբայի դեմ պայքարը հաջողությամբ առաջ տանելու համար պետք է անպայման հաղթահարենք այն տենդենցը, վոր կուլակ ե հայտարարվում ամեն մի քիչ-շատ ջանասեր գյուղացի, վորը բարձրացնում ե իր տնտեսությունը ե տենդենց ե ունենում վորոշ կուտակում կատարելու իր տնտեսության մեջ:

Պետք ե հիշել, վոր միջակ գյուղացին ահագին մեծամասնություն ե կազմում գյուղում ե այդ միջակ մեծամասնությունն իրոք շատ աղքատ տնտեսություն ունի:

Թեորիապես մենք համաձայնության ենք յեկել, վոր միջակ գյուղացին մեր թշնամին չե, վոր դեպի նա առանձին վերաբերմունք ե պահանջվում, վոր գործն այստեղ կփոխվի ըստ հեղափոխության բազմաթիվ անակնկալ մոմենտներին»,—այսպես եր ասում ընկ. Լենինը մեր կուսակցության VIII համագումարում (հատոր XVI, էջ 99):

«Սկզբունքորեն այս վերաբերմունքը մեր համար պարզ եր նաե հեղափոխությունից առաջ: Գյուղացիության չեղոքացման խնդիրը մենք դրել եյինք: Մոսկվայում տեղի ունեցող ժողովներից մեկում, վորտեղ դրված եր մանր-բուրժուական կուսակցությունների բռնելիք վերաբերմունքի հարցը, յես բերեցի Ենգելսի իսկական խոսքերը, վորոնցում նա վոչ միայն մատնանշում եր, թե միջակ գյուղացիությունը մեր դաշնակիցն ե, այլև նույնիսկ այն վստահությունն եր

արտահայտում, վոր գուցե հաջողվի խոշոր գյուղացիության վերաբերմամբ ես առանց բռնի միջոցների, առանց ճնշման միջոցների դիմելու կառավարվել: Ռուսաստանի վերաբերմամբ այդ յենթադրությունը չարդարացավ: Մենք կուլակների հետ ուղղակի քաղաքացիական պատերազմի մեջ ենք գտնվել, գտնվում ենք ե կգտնվենք: Սա անխուսափելի յե: Մենք այս գործնականում տեսանք: Բայց ամենուրեք խորհրդային աշխատավորների անփորձության, հարցի դժվարության պատճառով կուլակների համար նախորոշված հարվածները միջակ գյուղացիության գլխին եյին իջնում... Մենք այնպիսի բարեքներ չունենք, վոր կարողանայինք տալ միջակ գյուղացուն, իսկ նա մատերիալիստ ե, գործնական ե կոնկրետ նյութական բարեքներ ե պահանջում, վոր մենք այժմ տալ չենք կարող, ե առանց դրանց մեր յերկիրը պիտի կառավարվի, գուցե, դեռ ես ամիսներ շարունակ պայքար վարելով, վորն այժմ լիակատար հաղթանակ ե խոստանում: Բայց մենք կարող ենք շատ բան անել մեր վարչական պլան-բախտիկայի մեջ, բարելավել մեր ապպարատը, ուղղել բազմաթիվ չարարկություններ (злоупотребления): Մենք կարող ենք ե պետք ե մեր կուսակցության վարքագիծը շտկենք ե ուղղենք, վոր միջակ գյուղացիության հետ միության, համաձայնության գալու համար բավականաչափ ուժեղ չեա: (Նույն տեղում, էջ. 107-108):

Այսպես եր ասում ընկ. Լենինը դեռ ես 1919 թ.: Ավելի ես այժմ ե մեզ համար անհրաժեշտ միջակ գյուղացիության հետ դաշն կապել, համաձայնության գալ: մենք կարող ենք միջակի ճակատը (Фронтը) շտկել,

մենք կարող ենք միջանի տարվա ընթացքում հասնել այն բանին, վոր այդ միջակ-գյուղացին նույնքան գոհ լինի և վորոշ իմաստով խորհրդային իշխանության համար համարյա նույնքան ամուր նեցուկ դառնա, ինչքան այժմ միջակ անկուսակցական բանվորը: Կարող ենք և պետք է շտկենք: Նյութական այն բարիքներն տեսակետից, վոր մենք կարող կլինենք առաջարկել գյուղին, իհարկե ներկա մոմենտում ևս զրու-թյունը հիանալի է: Քանի արշին չիթ կարող է գնել գյուղացին մեկ փութ ալյուրով: Ահա գյուղական եկոնոմիկայի գլխավոր հարցը: Իսկ դրան դեռևս խիստ անմխիթարական պատասխան է տալիս ներքևը բերած աղյուսակը:

Ս. Խ. Հ. Մ. մեջ

1919 թ.	.	.	.	6,3	արշին
1921 թ.	.	.	.	7,2	»
1922 թ.	.	.	.	11,7	» *
1923 թ.	.	.	.	1,6	»
1924 թ.	.	.	.	2,9	»

Կրկին և կրկին անգամ մենք դեմ ենք առնում գների հարցին: Սակայն «նյութական բարիքների» տեսակետից 1925 թ. հարցը շատ ավելի լավ վիճակում է, քան 1919 թ.: Իսկ գլխավորն այն է, վոր լիովին վորոշ կերպով դեպի լավը գնալու տենդենցը, դեպի հաջող զարգացումն ընդառաջելը նկատելի յե դարձել:

*) Այս չի նշանակում, վոր 1922 թ. գյուղացին ավելի լավ եր ապրում, քան 1923 թ.: Այն ժամանակ այդ զինը քաղաքում յեվ թե գյուղում տնտեսության այժմյան արտադրությունն է:

Իսկ ինչ վերաբերում է վարչական պրակտիկային, ինչ վերաբերում է մեր կուսակցության վարչա-գծին միջակ գյուղացիության հետ համաձայնության գալու ինչդրում, պիտի ասել, վոր այժմ դրա բոլոր նախադրյալներն ակնհայտնի յեն: Առաջվա նման բան-վոր դասակարգի հիմնական խնդիրը նախ և առաջ այն է, վոր ոգնե գյուղատնտեսական մշակին (բատրակին) կազմակերպելու, ոգնե գյուղի ամենաաղքատ շերտե-րին վոտքի կանգնելու: Բայց «յերեսը դեպի գյուղ» նշանաբանը, 1925 թ., պրոլետարական դիկտատուրայի գոյության ութերորդ տարին, վոչ մի դեպքում չի բացասում, այլ ընդհակառակը յենթադրում է՝ դառնալով դեպի միջակ գյուղացին (курс и на деревенско-го середняка):

Բանվորական պետության խնդիրն է՝ չեղքացնել գյուղում կուլակին, ուրիշ խոսքով, գյուղում բոլորին, ի թիվս վորոնց յեվ միջակին, միացնել կուլակի դեմ: Գյուղի քաղաքական ակտիվության սկսած աճման մեջ կուլակը յետ չի մնում: Ընդհակառակը, նա շարունակ ավելի ու ավելի ակտիվ քաղաքական դեմք է դառնում գյուղում: Մեր անելիքն է՝ ոգնել գյուղատնտեսական մշակին, մանր ու միջակ գյուղացուն, մեզ մոտիկ կանգնած կոմյերիտիստների հետ, վոր ջախջախեն կուլակին և այդ ասպարիզում:

6. ՀԱՄԱՌԱՅՄԱՆ ՄԵԹՈՂԵՆ ՈՒ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ
ՄԵԹՈՂԵՆ.

Մեր կուսակցական ծրագրի 7-րդ կետն ասում է.

«Ամբողջ հեղափոխության մեջ քաղաքի արդյունաբերական պրոլետարիատի, իբրև աշխատավոր մասսայի ամենից ավելի կենտրոնացած, միացած, լուսավորված և պայքարում յեփված մասի, ղեկավար դերը յերևան յեկավ ինչպես խորհուրդների ծագման, այնպես ել պետական որգաններ դառնալու ճամպին նրանց կատարած ամբողջ զարգացման ընթացքում: Մեր խորհրդային Սահմանադրութունն իր մեջ այդ անդրադարձել է, արդյունաբերական պրոլետարիատին վորոշ գերադասութուն տալով գյուղի ավելի ցրված մանր բուրժուական մասսայի հանդեպ:

Ռ. Կ. Կ., բացատրելով այդ գերադասութունների ժամանակավոր բնույթը, վորոնք պատմականորեն կապված են գյուղի սոցիալիստական շինարարության դժվարությունների հետ, պիտի ձգտի արդյունաբերական պրոլետարիատի այս դրությունն ուղիղ և սիստեմատիկ կերպով օգտագործել այն ուղղությամբ, վոր հակառակ նեղ-համքարական և նեղ-արհեստակցական շահերի, վորով անուցում եր բանվորներին կապիտալիզմը, ավելի սերտ կերպով միացնել առաջավոր բանվորների հետ գյուղական պրոլետարների և կիսապրոլետարների, ինչպես նաև միջակ գյուղացիության հետամնաց և ցրված մասսաները»:

Կուսակցական VIII համագումարի առաջ այս ծրագիրը պաշտպանելով, ընկ. Լենինն ասում եր. «Մենք ամենևին ներում չենք խնդրում մեր վարքի

համար, այլ բոլորովին ճշգրիտ կերպով թվում ենք փաստերն, ինչպես վոր կան: Մեր սահմանադրությունը, ինչպես մենք մասնանշում ենք, ստիպված եր այդ անհավասարությունը մտցնել, վորովհետև կուլտուրական մակարդակն է ցած, վորովհետև կազմակերպությունն է մեր մոտ թույլ: Բայց մենք այդ իդեալ չենք դարձնում, այլ ընդհակառակը, համաձայն իր ծրագրի՝ կուսակցությունը պարտավորվում է ավելի սիստեմատիկ կերպով աշխատել, վոր պրոլետարիատի և գյուղացիության միջև յեղած այդ անհավասարությունը վոչնչանա: (Նկատեցեք՝ պրոլետարիատի և գյուղացիության և վոչ թե վորևե ուրիշի: Գ. Զ.): Այդ անհավասարությունը մենք կվերցնենք, հենց վոր մեզ հաջողվի կուլտուրական մակարդակը բարձրացնել: Այն ժամանակ մենք կկարողանանք առանց այդպիսի սահմանափակումների յել կառավարվել: Այդ սահմանափակումներն արդեն հիմա, բանվորագյուղացիական հեղափոխության ինչ-վոր 17 ամսից հետո իսկ, գործնականապես խիստ փոքր դեր են խաղում» (Հատոր XVI, էջ 129—130):

Այն հարցին, վոր այսպիսի հեռատեսությամբ դեռ վեց տարի սրանից առաջ դրել եր ընկ. Լենինը, մենք այժմ սկսում ենք ավելի կոմ պակաս չափով սերտորեն մոտենալ, Յեթե արդեն 1921 թ. ընկ. Լենինն ապացուցում եր, վոր պիտի կարողանալ վոչ միայն հարկադրանքի, այլ և համոզման մեթոդով գործել, այժմ բոլորովին պարզ է, վոր պրոլետարական դիկտատուրան իր ամրապնդման հետ միասին, պետք է ավելի ու ավելի տեղափոխե ծանրությամբ կեցութունը դեպի համոզման մեթոդը յեվ վոչ քե դեպի հարկադր-

րանգիւնը: Մենք ստիպւած էինք իր ժամանակին հեղափոխութիւնը փրկելու համար ընկժիղիցիոն ջոկատներ ուղարկել գյուղ: Մենք հետո պարենբաշխումը փոխեցինք պարենհարկի, ապա մենք տուրքի բոլոր տեսակները միացրինք ու վերածեցինք միասնական տուրքի: Հետո մենք միասնական պարենտուրքը փոխեցինք դրամական տուրքի: Այժմ մենք հարկային գործի ասպարիզում մոտենում ենք գեռես նոր բարենորոգումներ և դյուրութիւններ ստեղծելու խնդրին:

Խորհրդային իշխանութիւնը շարունակ ավելի ու ավելի յետափանցում յերկրի մարմնի ու արշաւ մեջ, նրա կենցաղի մեջ, Պրոլետարական ավանգարդն առաջվա նման անխնայ պիտի պատժե այն բոլոր տարրերին, վորոնք գիտակցաբար աշխատում են խզել բանվոր դասակարգի և գյուղացիութեան միջև յեղած կապը: Բայց հենց նոյն այդ պրոլետարական դիկտատուրան պիտի ապահովէ գյուղացիութեան համար իսկական հեղափոխական որինականութիւն, գյուղացիութեանը մոտ կանգնած խորհրդային իշխանութիւն և ավելի ու ավելի պիտի գրավէ դեպի խորհուրդները հենց իրենց՝ գյուղացիներին:

Մեր պետութիւնն այժմ կազմված է յերկու հիմնական դասակարգից, դրան գումարած ինչ-վոր կոտորակ: Հին բուրժուազիայի մնացորդները, նոր բուրժուազիայի սաղմերը, — ահա այդ կոտորակը: Մենք յերկու աչքով պիտի հետևենք այդ «կոտորակին», վորպէսզի թույլ չտանք, վոր նա աճի ու չափազանց խոշոր մեծութեան հասնի: Բայց մենք շարունակ պիտի հիշենք, վոր մեր պետութեան հիմնական բախտն ամենից ավելի պայմանավորված է յերկու դասակարգերի

— բանվորութեան ու գյուղացիութեան փոխհարաբերութեամբ:

Լայն, բազմամիլիոն գյուղացիական մասսային կուլտուրայի բարձրացման աշխատանքը, այն աշխատանքը, վորի մասին ընկ. Լենինը VIII համագումարում խոսում էր, իբրև մեր Խորհրդային Սահմանադրութեան մեջ վորոշ ուղղումներ մտցնելու նախադրյալ, — գեռես նոր է սկսվում: Բայց յեթե չեն խաբում բոլոր նախագուշակ նշանները, այդ աշխատանքն այժմ արագ և հաջող է առաջ գնալու: Կրկին ու կրկին անգամ վերհիշենք այն, ինչ վոր ընկ. Լենինն ասում էր գյուղացիութեան վերաբերմունքի մասին դեպի պրոլետարիատը, վերջինիս կողմից քաղաքական իշխանութեան նվաճումից հետո: Յեթե մեր քաղաքականութիւնը ուղիղ լինի, յեթե մեզ մոտիկ ապագայում միջազգային իմպերիալիստները նոր ճակատային գրոհով չխանդարեն, մենք կկառողնանք բանվոր դասակարգի յետևից տանել մեր գյուղացիութեան օտուճակ ավելի ու ավելի քանձու մասսաներ:

Միայն այս հեռանկարների լուսի տակ կարելի է հասկանալ այն ընթացքը, վոր բռնել է մեր կուսակցութիւնը խորհուրդների իսկական աշխուժացման, կամայականութեաններն արմատախիլ անելու, մեր կյանքի մեջ իսկական խորհրդային հեղափոխական որինականութեան արմատացման համար:

Ավելի քիչ հաւկադրանք, ավելի օտս համոզում. ավելի քիչ հրամայել, ավելի օտս գործնական ոգնութիւն հանցնել գյուղացիութեան:

7. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԿԱՄ
«ԳԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ».

Յեթե մենք գյուղացիությունը թերազնահատում ենք, դուք ել գերազնահատում եք,—այսպես են ասում յերբեմն հենց մեր սեփական կուսակցության ուղիղ գիցիտյի ներկայացուցիչները: Իսկ նրանցից վճռաբեկ խոսքն այնտեղ են հասցնում, վոր ուղղակի մեղադրում են մեզ «գյուղացիական թեքման», «նարոգնիկության» վերակենդանացման և նման այլ անհեթեթությունների մեջ: (Տեղին ե այստեղ հիշեցնել, վոր 1916 թ. Լենինի և Զինովյեի «Սոցիալիզմ և Պատերազմ» գրքույկի առթիվ ընկ. Տրոցկին այդ գրքույկի հեղինակներին անվանեց «Չեկաբինսկի նարոգնիկներ»*:

Այս նորությունը շատ հնություն ե պարունակում իր մեջ: Բայլևս իմի հենց առաջին քայլերից սկսած, յերբ ընկ. Լենինն ստիպված եր մենամարտի դուրս գալ մենշևիզմի գրական ներկայացուցիչների դեմ, նրան անմիջապես մեղադրեցին «նարոգնիկության» մեջ: Իսկ մենք յերեք հեղափոխության պատմությունից այժմ գիտենք արդեն, վոր նարոգնիկության հետադիմական քաղաքականության դեմ մինչև վերջ միակ հետեւողական պայքարողը հենց ընկ. Լենինն եր: Մենք գիտենք, վոր ընկ. Լենինին «նարոգնիկության» մեջ մեղադրող մենշևիկյան ղեկավարները 1917 թ. իրոք միացան նարոգնիկների ամենահետադիմական մասի հետ՝ պրոլետարիատի դեմ պայքարելու համար:

*Տես այս մասին «Տրոցկին Լենինի յեւ լենինիզմի մասին» խիստ հետաքրքրական գրքույկի Գ. Սաֆարովի գրած գեղեցիկ հառաջաբանը:

Իրոք, վորեւ իմաստ ունի՞ այն մեղադրանքը, թե մենք «գերազնահատում» ենք գյուղացիությունը: Միայն «թերազնահատություն» և «գերազնահատություն» բառերը հրապարակ նետելը,—բոլորովին անողորմ բան ե: Պետք ե շրջապատող անցուդարձի ելության մեջ թափանցել և հասկանալ, թե ի՞նչն ե իրոք այժմյան անցուդարձի հիմքը կազմում—գյուղացիության թերազնահատման, թե՞ գերազնահատման վտանգը: Յեթե հարցն այս ձևով դնենք, այն ժամանակ պատասխանը դժվար չի լինի: Պրոլետարական գիկտատուրայի ամբողջ ժամանակակից անցուդարձի հիմքումը հենց դրված ե գյուղացիության թերազնահատման վտանգը: Մեր կուսակցությունը բանվորական կուսակցություն ե: Մեր կուսակցությունը բանվորական թաղերում ե ծնունդ առել: Մեր կուսակցությունը իր գործնական աշխատանքում առնվազն յերկու տասնամյակի ընթացքում համարյա դուրս չի յեկել քաղաքի շրջանակից: Բանվոր դասակարգը մեր յերկրում այժմ բազմակողմանի կերպով ե կազմակերպվում: Բանվորական կազմակերպությունների շարունակ ավելի ու ավելի խիտ ցանցով ե ծածկվում յերկրի:

Բանվորները կազմակերպվում են, կարելի յետեսել, «ըստ լայնության և ըստ յերկարության»: Պատանի պիոներների կազմակերպությունն, որինակ, հենց նախաշանն ե (սիմպտոմ), վոր մեր յերկրի բանվորական կազմակերպությունն աննախընթաց բազմազանության և բազմակողմանիության ե հասել:

Իսկ գյուղը: Գյուղացին արդեն իր կյանքի պայմանները շնորհիվ չի կարող կազմակերպվել այնպես, ինչպես կազմակերպվում ե բանվորը: Գյուղի կարիք-

ներն ու պահանջները մեղ հասնում են շատ ավելի վոյո-
րապետույտ ճանապարհներով և շատ ավելի դժվարու-
թյամբ, քան բանվորների կարիքներն ու պահանջները:
«Յերեսը դեպի գյուղ» — սա հենց նշանակում է, վոր
այս բոլոր հանգամանքների մեջ անհրաժեշտ է ուղ-
ղում մտցնել:

Բանվոր դասակարգն իր անունից իր կուսա-
կցության բերանով հայտարարում է՝ «յերեսը դեպի
գյուղ»: Վորովհետև նա հասկանում է, վոր միայն
այդպիսով կարելի չի քաղաքականապես ամրապնդել
խորհուրդների իշխանութիւնը և միայն այդպիսով
կարելի չի պայմաններ ստեղծել, վոր պիւղը վերածնվի
սոցիալիզմի համար:

Կասկածից դուրս է, վոր բանվորների նյութական
դրութիւնն սկսում է լուրջ կերպով բարելավվել:
Մեր արդյունաբերութեան միջանի խոշոր բայոն-
ներում արդեն սերտորեն մոտեցել ենք աշխատա-
վարձի մինչ-պատերազմյան չափին: Աճում է բան-
վորական կոոպերացիան: Գործնականապես հերթի չի
դրված բանվորական բնակարանների շինութեան հարցը:
Բանվորների մեջ կուլտուրական աշխատանքը լայն
ծավալ է ընդունում: Իհարկէ, այս ասպարիզում ևս գոր-
ծի դեռ սկիզբն է դրվում: Բայց հենց գյուղացիութեան
անտեսական կարիքների, նրա քաղաքական ակտիվու-
թեան աճման թերազնահատութիւնը կարող կլինի
բանվոր դասակարգի և գյուղացիութեան միջև յեղած
կապի խզմանը հասցնել: Իսկ այդ կապի խզումը, կամ
նույնիսկ լուրջ տարաձայնութիւնն անգամ, կարող
կլինի որհասական նշանակութիւն ունեցող չափերով
հետաձգել բանվորների արդեն աճող նյութական բա-

րեկեցութիւնը, կարող կլինի բանվոր դասակարգի
սոցիալական հզորութեան աճման և նրա բազայի — քա-
ղաքի արդյունաբերութեան նախադրյալներն իսկ իշիք
դարձնել:

Թերազնահատութեան և թերազնահատութեան
հարցում պետք է «իմաստակել»: Պետք է վերցնել այն,
ինչվոր այս խնդրի վերաբերմամբ սովորեցնում էր մեզ
ընկ. Լենինը և այն ներկա հանգամանքներում գործա-
դրել կարողանալ: Այս է բոլոր խնդիրների խնդիրը:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԸ:

«Մարքսիզմի թեորիան, հեղափոխական բանվոր-
ների նոր, համաշխարհային մասշտաբով հարուստ փոր-
ձի պայծառ լուսով լուսավորված, ոգնեց մեզ, վոր հաս-
կանանք կատարվող դեպքերի ամբողջ որինաջալիւրյու-
նը: Նա կոգնէ կապիտալիստական վարձու ստրկութեան
տապալման համար պայքարող ամբողջ աշխարհի պրո-
լետարներին, վոր ավելի պայծառ գիտակցեն իրենց
պայքարի նպատակը, վոր ավելի հաստատակամութեամբ
գնան արդեն գծագրված ուղիով, ավելի նիւտ յեկ ա-
վելի հաստատուն կերպով հազարաւակ գրավեն յեկ
հազարաւակ ամբացնեն»: (Լենին, հատոր XVI, էջ 55):

Լենինիզմով հարստացած մարքսիզմի թեորիան,
կարող ենք ասել մենք այժմ, կոգնի մեզ ավելի պայ-
ծառ գիտակցել մեր պայքարի նպատակը և ավելի
հաստատակամութեամբ գնալ այն ուղիով, վոր ընկ. Լե-
նինն այնպիսի պայծառութեամբ լուսավորել է մեզ
համար:

Վերջացող դիսկուսիան նորից ու նորից ոգնեց մեր կուսակցութեանը, վոր ավելի լավ հասկանա բայժեիզմի հիմունքները:

Իսկ ի՞նչն է ներկա դիսկուսիայի սոցիալական աստառը: Ի՞նչ ակտուալ-քաղաքական վեճեր են թագ-նըված «պերմանենտ հեղափոխութեան» մասին յեղած այս դիսկուսիայի յետևը:

Ահա թե ինչ:

Մեռածը (հանձինս տրոցկիզմի «յեվրոպական» թեորիաների) հարվածում է կենդանուն (հանձինս լե-նինիզմի, վորն իբր թե միայն ազգային ուսական յե-րևույթ է, բայց իրոք միջազգային հեղափոխութեան թեորիան ու պրակտիկան է հանդիսանում):

Բանվոր դասակարգի գլուղացիութեան հանդեպ ունեցած քաղաքականութեան հարցում է պետութեան մեջ կուսակցութեան ունեցած իսկական ղեկավար դե-րի հարցում կուսակցութեանը յերևան է բերում ան-սասան կամք ամենաչնչին զիջումն անգամ չանել «յեվ-րոպական» կեղծ-մարքսիզմին, վոր զուգվել է «ձախ» տրոցկյան քղամիդով (մանտիայով):

Ահա այս է վողջ փիլիսոփայութեան իմաստը...

Հեռու է այն ժամանակը, յերբ ամբողջ կուսակցու-թեան համար պարզ կլինի, վոր ըստ արտաքինի գրա-կան և ըստ նյութի իբր թե միայն պատմական վեճերի տակ թաղնված էյին իրոք այն պրոբլեմները, վոր ներկա հոգւածում մեր ուժերի ներածի չափ լուսաբանեցինք: Ուրիշ խոսքով, այդտեղ թաղնված էր այն կարևորա-գույն պրոբլեմը, վորով պայմանավորված է մեր հեղա-փոխութեան ամբողջ ընթացքն ու յելքը՝ պրոլետարիատի ու գլուղացիութեան փոխհարաբերութեան պրոբլեմը:

«Յերեսը դեպի գլուղ».—այս նշանաբանի հաջո-ղութեան համար նախ և առաջ պետք է, վոր ինքը «յերեսը» ծուռ չլինի, այսինքն բանվոր դասակար-գի գլուխ անցած կուսակցութեանն ինքը լեցնեյան կուսակցութեան լինի, մեկ կտորից ձուլված լինի:

Կուսակցութեան ղեկավար («գլխավորող») ղերի մասին ընկ. Լենինը հետեյալն էր ասում.

...«Կուսակցութեան գլխավորող ղերի ճանաչումը պիտի աչի առաջ ունենանք... Մենք պիտի գիտենանք յեվ հիօեմք, վոր Խորհրդային Հանրապետութեան ամբողջ իրավական յեվ փաստական սահմանադրութեանը կա-ռուցված է նրա վրա, վոր կուսակցութեանն ամեն ինչ շտկում, նշանակում և կառուցում է համաձայն մեկ սկզբունքի, վոր պրոլետարիատի հետ կապված կոմուն-նիստական տարրերը կարողանան տոգորել պրոլետա-րիատին իրենց վողով, նրան իրենց յենթարկեն, բուր-ժուական խաբէյութեանից աղատագրեն... Մեզ հա-մար սկզբունքային վոչ մի կասկած չի կարող լինել, վոր պիտի կոմունիստական կուսակցութեան գլխա-վորութեանն լինի... (Մեզանից) յուրաքանչյուրը պատ-կանում է մի կուսակցութեան, վոր կառավարում է, վոր ղեկավարում է մի ամբողջ պետութեան, ղե-կավարում է Խորհրդային Ռուսաստանի համաշխար-հային պայքարն ընդդեմ բուրժուական կարգի: Նա ներկայացուցիչ է մի պայքարող դասակարգի և կուսակցութեան, վորն իշխում է և պիտի իշխե պետական հանգին ապարատի վրա»: (1920 թ. նո-յեմբերի 3-ին քաղլուսվարների խորհրդակցութեան մեջ արտասանած ձառից. մեջբերումներն անում եմ քաղլուսվարների խորհրդակցութեան համառուսական

բյուլլետենից, Մոսկվա, 1920 թ., Պետհրատ, արտատրված է Վ. Ի. Լենին.—«Սոցիալիստական հեղափոխությունը և լուսավորության խնդիրները» ժողովածուի մեջ. «Красная Новь», 1923 թ., էջ 40—41):

Ինչքան հեռու յեն Վլադիմիր Իլյիչի այս ամբակուռ, պողպատե խոսքերը տրոցկիստների և կիսատրոցկիստների ճարպիկ խուսափումներից (увеливание), վորոնք չեն համարձակվում իրենց մտքերը մինչև վերջ արտահայտել, բայց վորոնք ամբողջովին մի վարքագիծ են անցկացնում, վորի միտքն է՝ թուլացնել կուսակցության «գլխավորող» դերը կամ նույնիսկ ուղղակի «աղատագրել» կուսակցությունից «ահագին պետական ապստամբ»:

Վորպեսզի հնարավոր լինի գյուղացիության վերբերմամբ գործադրել այն ամբողջ բաղադրականությունը, առանց վորի վերջնական հաղթանակն անկարելի յե, հենց ամենաառաջին նախադրյալն է, վոր պահպանվի կուսակցության իսկական միությունը լենինիզմի հողի վրա յեվ բացառական կուսակցության ձեռնում մնա պետական յեվ տնտեսական մարմինների դեկավար դերը: Միայն այն դեպքում, յերբ բանվոր դասակարգն իր կուսակցության միջոցով կկարողանա ամբողջ պետական նավի ղեկն ամուր իր ձեռքում պահել, կարելի յե հուսալ, վոր վերը հիշված բոլոր խնդիրները հաջողությամբ կանցկացվեն: Իսկ սրա համար նախ և առաջ պահանջվում է, վոր լենինիզմը հենց կուսակցության ղեկն իր ձեռքում ամուր բռնի: Ամենափոքր չափով անգամ կուսակցությունը յետ մղել դեպի միայն ագիտացիոն-պրոպագանդիստական կազմակերպության դերը, նշանակում է բանվոր դասակար-

գի և գյուղացիության վողջ փոխհարաբերությունը խանգարել: Կուսակցությունից խորհուրդներն աղաթագրելու «թերիային» ամենափոքր դիջում անել,—նշանակում է՝ պրոլետարիատի գերիշխանությունը մահացու հարված հասցնել:

Միջազգային ասպարիզում հաջողությամբ զորաշարժներ անել այնպիսի հանգամանքներում, յերբ առաջին պրոլետարական պետությունը ամեն կողմից շրջապատված է թշնամիներով, հեղափոխության ամենագլխավոր հարցը բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերության հարցը հաջողությամբ լուծել, հավատարիմ մնալ լենինիզմի հիմունքներին,—այս բոլորը հնարավոր է միայն այն ժամանակ, յեթե մենք տնտեսական և պետական որդաններում մեր կուսակցության ղեկավար դերի հարցում ամենաչնչին դիջում չանենք:

Մանր բուրժուան բնազդաբար պաշտպանում է իր յուրահատուկ հասկացած «տրոցկիզմը» ամենից ավելի հենց այն պատճառով, վոր նա զգում է, թե տրոցկիզմի հաղթանակը ճշգրիտ կերպով մի բան է նշանակում՝ կուսակցության ղեկավար դերի թուլացում պետության և տնտեսության մեջ: Իսկ սա հենց այն ճեղքն է, վորն ընդլայնելով մանր բուրժուական տարերքը թափանցում է պրոլետարական դիկտատուրայի ամբողջ:

Հենց այն պատճառով, վոր մեր կուսակցությունը կառավարող կուսակցություն է, նա ստիպված է, ավելի քան վորեւե այլ յերկրի կոմունիստական կուսակցություն, հոգ տանել իր միատարրության, միաձուլության համար: Հենց այս պատճառով է, վոր ընկ.

Լենինի ղեկավարութեամբ մենք սկսեցինք այնպիսի արտակարգ միջոցների դիմել, ինչպիսին դառնում է Պրոլետարական դեկտատուրայի իրագործման մեխանիզմը շատ բարդ է։ Դրա մեջ մտնում են և՛ պրոֆմիությունները, իբրև կոմմունիզմի դպրոցներ, և՛ խորհուրդները, իբրև վարչության որդաններ, և՛ դպրոցները, և՛ մի շարք այլ կարևորագույն կազմակերպություններ, վերջինք պրոլետարական դեկտատուրայի «լծակների սիստեմի» մեջ իրենց դերն են խաղում։ Բայց հենց նրա համար, վոր լծակների այս ամբողջ սիստեմը ճիշտ գործի դրվի, պետք է, վոր այդ լծակների սիստեմի մեջ հիմնական լծակը (Ռ. Կ. Կ.) լենինիզմի անսասան հիմունքի վրա մնա։ Իսկ այդ իմիջի ալոց նշանակում է. 1) պետք է կուսակցությունը զանազան «հոսանքների» և ուղղությունների գումարի չվերածվի, 2) նույնը նաև ավելի մեծ չափով վերաբերում է կուսակցության գլխավոր շտաբին։

«Հաղթանակը վերցնել»,—այս խնդիրը կուսակցությունը լուծել է ընկ. Լենինի անմիջական ղեկավարութեամբ։ «Հաղթանակն ամրապնդել»,—այս աշխատանքը մեր կուսակցությունն ստիպված է իր վախճանին հասցնել արդեն առանց ընկ. Լենինի անմիջական ղեկավարութեան։ Այս խնդիրը հեշտ չէ, բայց լիովին լուծելի չէ։ Մենք անկասկած կլուծենք այդ խնդիրը, յեթե լիովին և մինչև վերջ անհաշտ լինենք այնտեղ, վորտեղ գործը վերաբերում է լենինիզմի սկզբունքներին։



ՀՀ Ազգային գրադարան



NL0415220

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.



Լույս տեսած գրքերը վաճառվում են Պետհրատի
գրախանութում.